

## Հասմիկ Հմայակյան

պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

hmayakyan@yahoo.com

### ՀԱՅԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐԸ ԼՈՒԻ ԴՅՈՒՅՐԵԻ ԵՎ ԿԱՍՊԱՐ ՆԵՏՇԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Բանալի բառեր՝* Լուի Դյուպրե, Կասպար Նետշեր, օրինատալիզմ, հոլանդական գեղանկարչություն

Հոդվածում քննարկվում է արևմտանվրուպացի նկարիչներ Լուի Դյուպրեի և Կասպար Նետշերի ստեղծագործություններում առկա հայերի պատկերումները: Ընդհանրապես հայկական թեմային անդրադարձել են ամենատարբեր երկրների նկարիչներ, հատկապես օրինատալիստներ, ովքեր իրենց արվեստում ու զանազան ճանապարհորդական նոթագրությունների ու հաշվետվությունների պատկերազարդումներում պատկերել են հայերին, հայկական իրողություններ, գորգեր և այլն: Այս առումով հատկանշական են հայտնի օրինատալիստ ու դիվանագիտական խմբի շրջանակներում Օսմանյան Թուրքիայում երկար տարիներ ապրած Ժան Վանմուրի ստեղծագործություններում առկա հայկական թեմաներով պատկերումները (Hefedova 2009): Ուսումնասիրություններն ի ցույց են դնում, որ հայկական թեման շարունակել է մնալ օտար օրինատալիստների հետաքրքրությունների շրջանակում նաև օրինատալիզմի զարգացման հետագա փուլերում, ինչի լավագույն վկայություններն են Ջոն Ֆրեդերիկ Լյուիսի (Weeks 2013; Tromans, Kabbani 2008, 211), Լուի Դյուպրեի և այլոց ստեղծագործություններում առկա հայերի պատկերումները: Շատ հետքերական է 19-րդ դարի ռուս սիրող-նկարիչ, արվեստագետ, և ռուսական արքունիքի օբերիոֆմայստեր ու գաղտնի խորհրդական Գրիգորի Գազարինի Կովկասին նվիրված լիտոգրաֆիաների հավաքածուն, որը լույս է տեսել ֆրանսերենով Փարիզում՝ 1847-ին և որում բազմաթիվ հայերի ու հայկական թեմաներով պատկերումներ կան, այդ թվում՝ հին Երևանի, Սարդարի պալատի, Էջմիածնի, ճարտարապետական այլ շինությունների պատկերներ:

Լուի Դյուպրեն (1789–1837) ֆրանսիացի նկարիչ է, ով հայտնի է դեպի Հունաստան և Օսմանյան կայսրության այլ վայրեր կատարած իր ուղևորություններով, որոնցից ստացած տպավորություններն իրենց արատացողումն են գտել նրա օրինատալիստական ռճով ստեղծագործություններում:

Նա եղել է ֆրանսիացի հայտնի գեղանկարիչ Ժակ Լուի Դավիդի աշակերտը, սովորել է նաև Իտալիայում, այնուհետև մեկնել 1819-ին Հունաստան՝ այնտեղ գտնվելով Օսմանյան կայսրության դեմ վերջինիս մղած ազատագրական պայքարի ժամանակ, որի ընթացքում ստեղծվել է նրա ճանապարհորդական գիրքը: Այս ճանապարհորդության ընթացքում նա պատկերել է ամենատարբեր ազգերի և սո-

ցիալական խմբերի պատկանող մարդկանց: Գիրքը կոչվում էր «Ճանապարհորդություն Աթենք և Կոնստանդնուպոլիս», որը հրատարակվում է մի քանի տարի անց՝ 1825-ին: Այն պարունակում է շուրջ 40 պատկերներ և 52 էջ տեքստ: Այս պատկերումներում հանդիպում է Օսմանյան կայսրության հայ մեծամեծներից մեկի և նրա կնոջ դիմանկարը՝ «Հայ մեծատոհմիկը և նրա կինը»: Դիմանկարը ստեղծված է ընտանեկան հանդիսային դիմանկարի ոճով. տղամարդը կիսանստած է թախտին, կինը կանգնած կողքին, երկուսն էլ օսմանյան արքունական նորաձևությամբ են հանգնված և նայում են դիտողին (նկ. 1):

Ընդհանրապես Դյուպրեի կերտած կերպարներից ակնհայտ է, որ հայերը Օսմանյան արքունիքում բարձր պաշտոններ էին զբաղեցնում: Բնականաբար, Դյուպրեն իր առջև խնդիր չէր դրել պատկերել հատկապես մեծատոհմիկ հայերին, նրա ստեղծագործություններում իր արտացոլումն է գտել օսմանյան իրականությունը, որում բնականաբար հայերը կարևոր դերակատարություն են ունեցել: Ի դեպ, այս նկարը պատկերված է նաև Պասկալ Կարմունի «Ամիրաներ, Օսմանյան Հայաստանի տերերը» գրքի շապիկին (Garmont 2012):

Դյուպրեն պատկերել է նաև այս մեծատոհմիկ հայ ընտանքի տղամարդու և կնոջ առանձին դիմանկարները, որոնք վաճառվել են վերջերս աճուրդով. տղամարդու դիմանկարը կոչվում էր «Ազնվագարն օսմանցի», որ թվագրված է 1821 թ.<sup>1</sup>, իսկ կնոջ դիմանկարը՝ «Հայ կինը Կոստանդնուպոլիսից»՝ 1819 թ.<sup>2</sup>: Երկու դիմանկարներում էլ բացահայտված են պատկերվողների բնութագրերը, տղամարդու բարձր դիրքը, արևելյան կնոջ գեղեցկությունը: Դյուպրեն պատկերել է նաև մինևույն տղամարդուն կանգնած դիրքով՝ ձեռքը կողքին հենած՝ վեհ կեցվածքով (նկ. 2):

Լուի Դյուպրեն ստեղծել է մեկ այլ մեծատոհմիկ երիտասարդ հայի կերպար, որն անբռնագրոսիկ դիրքով նստած է՝ մորթե երիզներով կապույտ առլասե հագուստով, որը համապատասխանում է օսմանյան արքունական նորաձևությանը, չալմայով է, վեր հատած հայացքը փոքր-ինչ մտախոհություն է հաղորդում կերպարին (նկ. 3):

Հաջորդ նկարիչը՝ Կասպար Նետշերը, որը ժամանակագրորեն ավելի վաղ է ստեղծագործել, երբևէ չի եղել արևելյան երկրներում: Նրա երեք ստեղծագործություններ ցուցադրվում և պահպանվում են Հայաստանի ազգային պատկերասրահի մշտական ցուցադրությունում և ֆոնդերում (Կատալոգ 1965, 547): Կասպար Նետշերը ենթադրվում է, որ ծնվել է 1635–1636-ին կամ 1639-ին կամ՝ Հայդելբերգում և մահացել 1684-ին՝ Հասագայում (Wiesman 2002, 23): Նա 17-րդ դարի ուշ շրջանի հոլանդական գեղանկարչության հաջողակ ու ճանաչված ներկայացուցիչներից մեկն էր: Ծնվել է քանդակագործի ընտանիքում, սակայն վաղ տարիքում զրկվում է հորից, ով վախճանվում է քաղաքացիական պատերազմի տարիներին: Մայրը

<sup>1</sup> Աճուրդի կայքից վերցված նկարը տես Artnet, Vergangene Auktion, [http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/portrait-de-notable-ottoman-Ny4RihWkLQ2AI-mvh-sjpw2?fbclid=IwAR0dFARmLoWJhH2TTgZ6J\\_2QKai](http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/portrait-de-notable-ottoman-Ny4RihWkLQ2AI-mvh-sjpw2?fbclid=IwAR0dFARmLoWJhH2TTgZ6J_2QKai)

<sup>2</sup> Աճուրդի կայքից վերցված նկարը տես Artnet, Vergangene Auktion, [http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd\\_dXFR-Z9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR25g5k1IaaHqIB](http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd_dXFR-Z9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR25g5k1IaaHqIB)

կարողանում է ողջ մնացած երեխաների հետ փախչել Արնհեյմ, որտեղ մանկահասակ Կասպարին որդեգրում է տեղացի մի բժիշկ, ցանկանալով, որ տղան շարունակի իր մասնագիտությունը: Սակայն պատանին շատ վաղ տարիքից արդեն արվեստի նկատմամբ հետաքրքրություն է դրսևնորում և աշակերտում է Դե Կուստերսի մոտ, ով հիմնականում պատկերում էր թռչուններ և նատյուրմորտներ: Շուտով երիտասարդ ու շնորհաշատ Նետշերը գերազանցում է իր ուսուցչին և ցանկանալով մեկնել Իտալիա՝ Լիեթ գնացող նա՛վս է նստում, որտեղ էլ ծանոթանում է իր ապագա կնոջ հետ, և Իտալիայի փոխարեն մեկնում Բորդո, իսկ հետագայում՝ Հաագա, որտեղ էլ վերջնականապես հիմնավորվում է (Smith 1833, 142–143): Նետշերը ուսանել է նաև հոլանադացի մեծանուն գեղանկարիչ Հերարդ Տերբորխի մոտ (Sturla, 1959–1960, 107), որի ազդեցությամբ պատկերում էր հոլանդական բյուրգերական հարուստ խավի ներկայացուցիչների կյանքի և կենցաղի տեսարաններ, որոնց գլխավոր հերոսուհիները հիմնականում կանայք էին: Նետշերն այնքան հայտնի է դառնում որպես դիմանկարիչ, որ անգամ անգլիայի թագավոր Կառլոս երկրորդն է նրան հրավիրում իր արքունիք (Smith 1833, 142–143): Նրա ստեղծագործություններն այժի էին ընկնում հորինվածքային կոտ կառուցվածքով, գործվածքների, մակերեսների ու կտորների աստիճան փայլի, գորգերի, ինտերիերի տարբեր մանրամասների պատկերման մեծ վարպետությամբ:

Նետշերի ստեղծագործությունները ցուցադրվում են ամենահեղինակավոր թանգարաններում. Լուվրում, Ամստերդամի և Ֆլորենցիայի թանգարաններում, Էրմիտաժում, մասնավոր տարբեր հավաքածուներում:

Ինչպես նշվեց, Հայաստանի ազգային պատկերասրահում պահպանվում և ցուցադրվում են երեք գործեր, որոնցից երկուսը յուղաներկով արված՝ «Կանացի դիմանկար», «Երգեցողության դաս»՝ մշտական ցուցադրությունում են և մեկ բեղիլայով և մատիտով արված՝ «Կանացի դիմանկար» պահպանվում է ֆոնդերում (Կատալոգ 1965, 547):

Հետաքրքրական է, որ մեր որոնումների արդյունքում գտանք Նետշերի վրձնին պատկանող նաև հայկական թեմայով մեկ գործ՝ «Պատուհանին հենված երիտասարդ հայը» նկարը, որում պատկերված է պատանի՝ հավանաբար առևտրական խավի պատկանող, որ նայում է պատուհանից դուրս: Նա գեղեցիկ արևելյան ոճի հանադերձանքով է, գլխին փաթթոց-չավմայով, հայացքն ուղղված է դեպի աջ<sup>3</sup> (նկ. 4): Ընդհանրապես պատուհանից դուրս նայող պատանու, երեխայի կամ կնոջ կերպարը Նետշերի սիրելի թեմաներից է, և նա նմանատիպ հորինվածքային լուծումներով այլ կտավներ էլ ունի: Պատանին ոսկեփայլ արևելյան հանդերձով է՝ կիպ կոճկված, երկար թևքերով, առանց օձիքի խալաթով և կարմիր թիկնոցով, կամիր և սպիտակ չավմայով՝ առանց մորթե երիզի: Կասպար Նետշերը, ճիշտ է օրինատալիստ չէր, սակայն հայտնի էր արևելյան տիպի հագուստների և գորգերի պատկերմամբ, ինչը վկայում էր Հոլանդիայի առևտրական կապերի մասին արևելյան երկրների հետ, որի մասին առավել մանրամասն կխոսվի ստորև:

<sup>3</sup> Wikidata, A Young Turk (Q52222346), <http://www.nationaltrustcollections.org.uk/object/541100>

Այս ստեղծագործությունը պահպանվում է Անգլիայում, Դեվոնում՝ Նայթսհեյզ Քորթի հավաքածուում՝ «Պատուհանին հենված երիտասարդ հայը» վերնագրով<sup>4</sup>: Նշենք, որ որոշ կայքերում այն նշվում է որպես «Երիտասարդ թուրքը», սակայն 1913թ. կատալոգում, որը հավանաբար պարունակում է այս նկարի ամենավաղ նկարագրությունը, այն նշված է որպես հայ պատանու դիմանկար (de Groot, 174): Ակնհայտ է սակայն, որ այստեղ գործ ունենք այն խնդրի հետ, որ պատանու հագուստը արևելյան ոճով էր, ինչը բնական էր, քանզի, ինչպես տեսանք, օրինակ, Օսմանյան կայսրության մեծատոհմիկ կամ վաճառական հայ ներկայացուցիչները կրում էին համապատասխան հագուստ, ինչը բնորոշ էր բարձրաշխարհիկ օսմանյան հասարակությանը. հաշվի առնելով պատանու արտաքին հանդերձանքը՝ կարելի է ենթադրել, որ այստեղ, հնարավոր է, պատկերված է հայ վաճառականի որդի: Հայտնի է, որ ինքը՝ Նետշերը երբևէ չի եղել արևելյան երկրներում, սակայն 17-րդ դարում Հոլանդիայում բարձր զարգացածության է հասնում առևտուրը, որում իրենց կարևոր ներդրումն ունեին նաև հայ վաճառականները, որոնց հետ կարող էր ծանոթ լինել Նետշերը:

Հայերի և հոլանդացիների առևտրական կապերը բուռն զարգացման են հասնում 16–17-րդ դարերի ընթացքում, և այս հարցը մանրամասնորեն ուսումնասիրել է Վ.Քյուրքջյանը: Ըստ նրա, 1594 թվականին առաջին հոլանդական նավը մտնում է Կոստանդնուպոլիս՝ Անգլիայի դրոշի ներքո, որի հետ Օսմանյան կայսրությունը պայմանագիր էր կնքել 1580 թվականին: Հոլանդիայի ծովային նշանակությունն այնքան էր աճել, որ օսմանյան ծովակալ Խալիլ փաշան՝ ծագումով հայ, ուղիղ բանակցությունների մեջ մտնելով հոլանդացիների հետ՝ հնարավոր է դարձնում 1612 թվականին պայմանագրի կնքումը, որի համաձայն Հոլանդիային տրվեցին նույն առևտրային արտոնությունները, ինչ բրիտանացիներն ու ֆրանսիացիները վայելում էին թուրքական նավահանգիստներում:

Զմյուռնիայում, Իտալիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում արդեն հաստատված հայ վաճառականները իրենց ապրանքների տեղափոխումը իրականացնում էին բացառապես հոլանդական նավերով և պահեստներ բացում Ամստերդամում՝ դրանով իսկ նպաստելով Մերձավոր Արևելքի հետ այդ քաղաքի առևտրի հետագա ընդլայնմանը:

Հայ և հոլանդացի վաճառականների միջև կապեր հաստատվել են նաև Արևելյան Հնդկաստանում 1645 թվականին: Պարսկաստանի գրեթե ողջ առևտուրն իրականացնում էր Արևելա-հնդկական հոլանդական ընկերությունը: Պարսկաստանի Նոր Զուղայի որոշ հայեր մինչ այդ էլ արդեն ծաղկուն գործունեություն էին ծավալում Ամստերդամում: Հայերը հիշատակվել են նաև Բրյուզե քաղաքում ավելի վաղ՝ տասներկուերորդ դարում: Ավելի ուշ՝ 1345 թվականին, հայերին թույլատրվել է գորգեր վաճառել Բրյուզեի եկեղեցու դիմաց: 1478-ին հայերն այդ քաղաքում ունեին իրենց եկեղեցին:

Նույն ժամանակաշրջանում Զմյուռնիայից նույնպես բավականին մեծաթիվ հայ վաճառականներ էին եկել Հոլանդիա: Պահպանվել է հոլանդական ռազմածո-

<sup>4</sup> <https://www.wikidata.org/wiki/Q52222346>

վային նավատորմի նավապետ Ստենի և Ամստերդամի վեց հայ վաճառականների միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում էին այն պայմանները, որոնց համաձայն վերջիններիս ապրանքները պետք է առաքվեին Լիվորնո: 1627 թ. թվագրված փաստաթուղթը ստորագրությունների փոխարեն կրում է վաճառականների՝ Սարիատի, Զաքարի, Օհանի, Մարկոսի, Պետրոսի և Հովակիմի անունները:

Ըստ հոլանդացիների, հայերը «հիմնականում լավ դաստիարակված տղամարդիկ էին, ովքեր իրենց մայրենի լեզվից բացի խոսում էին իտալերեն և ֆրանսերեն լեզուներով»: Շուտով հայ վաճառականները սովորում են նաև հոլանդերեն և անգամ ամուսնանում հոլանդուհիների հետ: Նրանք նաև սկսում են իրենց անունները հոլանդական ձևերով փոփոխել (Kurkjian 1958, 174):

Հիմնվելով վերոնշյալի վրա, կարելի է ենթադրել, որ նկարում պատկերվածը հավանաբար Հոլանդիայում քնակվող հայ վաճառականի որդի է, գուցե անգամ արդեն հոլանդուհի կնոջից, քանզի պատանու դիմագծերում նշմարելի է նաև եվրոպական ազդեցություն: Նկարի հնարավոր վաղ հիշատակումներից մեկը, ինչպես նշեցինք, 1913 թ. հոլանդացի գեղանկարիչների աշխատանքների նկարագրությունը պարունակող կատալոգում է, որում 73-րդ համարի տակ նշված է հեղինակը և նկարի անվանումը՝ «Պատուհանին հենված երիտասարդ հայը», բերված է նկարի հակիրճ նկարագրությունը, այն յուղաներկ է, նկարված է տախտակի վրա, հավանաբար թվագրվում է 1665 թ., չափսերն են՝ 8 ինչ և 7 ինչ, առաջին անգամ վաճառվել է 1767-ին՝ 1702 ֆրանկով, իսկ այնուհետև 1772-ին՝ 3001 ֆրանկով, հետագայում ստեղծագործությունը հայտնվել է Սանկտ-Պետերբուրգում՝ 1842 թ. կոմս Ստրոգանովի հավաքածուում, սակայն հեղինակը չի հիշատակում, որ այն տեսել է այնտեղ (de Groot 1913, 174), իսկ այնուհետև այն հայտնվում է Անգլիայում՝ Նայթս-հեյզ Բորթում գտնվող հավաքածուում, որտեղ ի թիվս Նետշերի մի քանի նկարների, պատանի հայի նկարն էլ առ այսօր պահպանվում է<sup>5</sup>: Նետշերը սիրում էր իր աշխատանքներում պատկերել նաև ամենատարբեր գորգեր՝ այդ թվում և հայկական, որոնք, ինչպես տեսանք, հայտնվել էին եվրոպական երկրներում, ինչպես և Հոլանդիայում՝ հայ վաճառականների շնորհիվ և որոնք խիստ հարգի էին այդ ժամանակաշրջանի եվրոպական ինտերիերներում և բազմիցս պատկերվում էին նկարիչների կողմից:

Ամփոփելով՝ կարելի եզրակացնել, որ հայկական թեման մշտապես եղել է այն արևմտաեվրոպացի գեղանկարիչների հետաքրքրության շրջանակներում, ովքեր տարվել են օրինատալիզմով, և նրանց կտավներում առկա կերպարները պատկերացում են տալիս հատկապես Օսմանյան իրականության մեջ հայերի զբաղեցրած դերի և դիրքի մասին: Ինչ վերաբերում է հոլանդական գեղանկարիչ Կ. Նետշերի արվեստում, ամենայն հավանականությամբ, վաճառականական դասին պատկանող հայ պատանու կերպարի պատկերմանը, ապա, ինչպես նշեցինք վերևում, տվյալ ժամանակաշրջանում հայ վաճառականական խավը նկատելի դերակատարում ուներ Հոլանդիայում, ինչի վկայությունն են նաև համաժամանակյա

<sup>5</sup> Art UK, National Trust, Knightshayes Court, <https://artuk.org/visit/venues/national-trust-knightshayes-court-4971>

հոլանդական գեղանկարչության մեջ ամենատարբեր հայկական գորգերի պատկերումները ևս, որոնք այլ արևելքի ճոխությունը ներկայացնող իրերի հետ այդքան նորաձև էին 17–18-րդ դարերի արևմտանվրոպական արվեստում: Հարկ է նշել, որ բազմաթիվ հայերի և հայկական իրողությունների պատկերումներ են առկա արևմտանվրոպական արվեստի ամենատարբեր ներկայացուցիչների կտավներում, որոնք հաճախ անձանոթ են հայ արվեստասերներին և երբեմն էլ՝ մասնագիտական շրջանակներին, և որոնք ցրված են զանազան երկրների թանգարաններում, ցուցարաններում և մասնավոր հավաքածուներում ու սպասում են մասնագետների բացահայտումներին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԿՍՏՆՈՒԳ 1965 – Հայաստանի պետական պատկերասրահ, Գեղանկարի, քանդակի, գրաֆիկայի կատալոգ, Երևան, 1965:

DUPRÉ 1825 – Dupré L., Voyage à Athenes et à Constantinople, ou collection des portraits, de vues et costumes grecs et ottomans, Paris: Dondey-Dupre, 1825.

GAGARINE 1845 – Gagarine G., Scenes, paysages, meurs et costumes du Caucase, Paris, 1845.

GARMONT 2012 – Garmont P., The Amiras: Lords of Ottoman Armenia, Comidas institute, 2012.

DE GROOT H 1913 – de Groot H., A Catalogue Raisonn of the Most Eminent Dutch Painters of the Seventeenth Century, 8 vols., London 1907, vol.5 (1913).

KURKJIAN 1958 – Kurkjian V., A History of Armenia, Published by The Armenian General Benevolent Union of America, 1958.

SMITH 1833 – Smith J., A Catalogue Raisonn of the Works of the Most Eminent Dutch, Flemish and French Painters, P.4, London, 1833.

STURLA 1960 – Sturla J., Gudlauggson, Gerard ter Borch, 2 vols., The Hague, 1959–1960, v.1.

TROMANS KABBANI 2008 – Tromans N., Kabbani R., The Lure of the East: British Orientalist Painting, New Haven 2008.

WEEKS 2013 – Weeks E., Oil and Water: (Re)Discovering John Frederick Lewis (1804–76), Nineteenth-Century Art Worldwide, Volume 12, Issue 2, Autumn 2013.

WIESMAN 2002 – Wieseman M., Caspar Netscher and Late Seventeenth-Century Dutch Painting, Doornspijk, 2002,

НЕФЕДОВА 2009 – Нефедова О., Творчество Жана- Батиста Ванмура (1671–1737) и проблема ориентализма в западноевропейской живописи XVIII в, Диссертация, Москва, 2009.

[https://commons.wikimedia.org/wiki/File:An\\_Armenian\\_nobleman\\_and\\_his\\_wife\\_by\\_Louis\\_Dupr%C3%A9\\_\(Duz\\_Oglou\\_family\)\\_-\\_1827.jpg](https://commons.wikimedia.org/wiki/File:An_Armenian_nobleman_and_his_wife_by_Louis_Dupr%C3%A9_(Duz_Oglou_family)_-_1827.jpg)

<http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/portrait-de-notable-ottoman-Ny4RihWkLQ2AI-mv>

[http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd\\_dXFRZ9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR25g5k11aaHq1B](http://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd_dXFRZ9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR25g5k11aaHq1B)

[https://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd\\_dXFRZ9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR0dFARmLoWJhH2TTgZ6J\\_2QKai](https://www.artnet.de/k%C3%BCnstler/louis-dupr%C3%A9/une-dame-armenienne-la-constantinople-rxd_dXFRZ9oxvfxwUsOckQ2?fbclid=IwAR0dFARmLoWJhH2TTgZ6J_2QKai)

<http://www.nationaltrustcollections.org.uk/object/541100>

<https://www.wikidata.org/wiki/Q52222346>

<https://artuk.org/visit/venues/national-trust-knightshayes-court-4971>

Hasmik Hmayakyan

Ph.D.

*Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*  
hmayakyan@yahoo.com

## DEPICTIONS OF ARMENIANS IN PAINTINGS OF LOUIS DUPRÉ AND CASPAR NETSCHER

**Keywords:** Louis Dupré, Caspar Netscher, Orientalism, Dutch painting

The author discusses the paintings of Western European painters Louis Dupré and Caspar Netscher illustrating Armenians that are not so well known among art historians and the destiny of these paintings.

Louis Dupré (1789–1837) was a French painter whose *Voyage à Athènes et à Constantinople* of 1825 contains illustrations of a notable Armenian and his spouse as well as another Armenian youth. Judging from these paintings it could be stated that the Armenians held high and important positions in Ottoman court.

Caspar Netscher (1639–1684) is a well-known Dutch painter whose three paintings are exhibited in The National Gallery of Armenia. Nevertheless as a result of our explorations we have revealed another work named “Yong Armenian Leaning At a Window” now exhibited in Khightshayes Court, Devon, England. Judging from his clothes, the portrait illustrates a son of an Armenian merchant as they have played remarkable role in the Dutch trade in the 17th century.

It is noteworthy that the portraits of Armenians and the scenes of the Armenian life were plenty in notes of European orientalist painters, various museums and private collections that are waiting for new studies and discoveries by the art experts.

Асмик Амаякян

к. и. н.

*Институт востоковедения, НАН Республики Армения*  
hmayakyan@yahoo.com

## ИЗОБРАЖЕНИЕ АРМЯН В КАРТИНАХ ЛУИ ДЮПРЕ И КАСПАРА НЕТШЕРА

**Ключевые слова:** Луи Дюпре, Каспар Нетшер, ориентализм, голландская живопись

Статья посвящена изображениям армян в произведениях западноевропейских художников Луи Дюпре и Каспара Нетшера, которые недостаточно известны и их последующей судьбе.

Луи Дюпре (1789–1837) – французский художник, в хронике которого «Путешествие в Афины и Константинополь», вышедшем в 1925 году, есть изображения знатного армянина, его супруги, а также картина другого армянского юноши. Из этих изображений можно предположить, что армяне занимали очень высокие и важные посты при Османском дворе.

Каспар Нетшер (1639–1684) – известный голландский художник, три картины которого выставлены в Национальной галерее Армении. Однако в результате нашего исследования мы выявили еще одну картину, названную «Армянский юноша у окна», которая хранится в замке Найтсхейз Корт, Девон, Англия. Судя по одежде юноши, мы предполагаем, что на картине изображен сын армянского торговца, так как в Голландии 17-ого века армянские купцы играли важную роль в развитии торговли.

Необходимо отметить также, что имеются многочисленные изображения армян и армянского быта в записных книжках и зарисовках западноевропейских ориенталистов находящихся в музеях и частных собраниях, ожидающих новых исследований и открытий специалистов.